ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/45

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՄԱՅ» ՕԱՕ-ի ներկայացուցիչ

Ա. Թադևոսյանի (լիազորագիր՝ տրված 04.03.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.02.2021թ. թիվ 26/26/1964-2021 գրությամբ «ՄԱՅ» ՕԱՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.02.2021թ. թիվ 01/61-2218 գրության հիման վրա 12.02.2021թ. թիվ 26/26/1964-2021 գրությամբ նախաձեռնել է «ՄԱՅ» ՕԱՕ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՄԱԶ» ՕԱՕ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄԱԶ» ՕԱՕ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/45 ընթացակարգի շրջանակներում 22.02.2021թ. ժամը 10:25-ին և 05.03.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, Ընկերությունը 05.03.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի 08.02.2021թ.-ի N 12 որոշմամբ հաստատվել են հայտերի գնահատման արդյունքները և հայտարարվել է որոշում «ZHONGTONG BUS HOLDING CO LTD» մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին: Նշված որոշման համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, «ՄԱԶ» ԲԲԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Գրանցված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում ենք.

1. ՄԱԶ 206946 ավտոբուսի թափքի հակակոռոզիոն մշակումն ապահովում է հիմնակմախքի առնվազն 10 տարի աշխատանքային ժամկետ և ըստ բնութագրերի չի զիջում կատաֆորեզի տեխնոլոգիային:

<u>Տեղեկություն.</u> մինչ եռակցումը հիմնակմախքի խողովակներն անցնում են խածատման և հատուկ լուծույթներում պասիվացման պրոցես: Անիվների կամարներն իրականացվում են չժանգոտվող պողպատից, հիմնակմախքը պատվում է հակակոռոզիոն նյութով: Զորացումից հետո հակակոռոզիոն Dinitrol 1000 (Շվեդիա), Mercacol 831 ML (Շվեդիա) կամ Noxudol 750 (Շվեդիա) միացությունը բարձր ճնշման տակ փոշեդրվում է բոլոր ներքին խոռոչների մեջ (մինչև պատուհանների մակարդակը): Հիմնակմախքը ծածկվում է պողպատե ցինկապատ թիթեղով: Առկա են ապակեպլաստմասից և ալյումինից պատրաստված էլեմենտներ:

2. «ՄԱԶ» ԲԲԸ-ի արտադրության առաջարկվող ավտոբուսներում ուղևորասրահի հետևի ապակին մխված է և հանդիսանում է պահեստային ելք:

3. ՄԱԶ 206946-ի դիմապակին համապատասխանում է ՄԱԿ-ի N 43 Կանոնների բոլոր պահանջներին և հանդիսանում է համայնապատկերային, բազմաշերտ (եռաշերտ), անբլիկ, բաղկացած մեկ բաժնից (համայնապատկերային), որը լավագույն տեսադաշտն է վարորդի համար և բարելավում է վարորդի խցիկի բնական լուսավորությունը' համեմատած 3 բաժնից կազմված դիմապակիների հետ:

4. «MAЗ» ԲԲԸ-ի կողմից արտադրված առաջարկվող ավտոբուսներն ունեն օդափոխման օդանցք և առաջին օգնության պարագաներ, որոնք տեղակայված են դրա պահպանման համար նախատեսված վայրում համաձայն՝ ՄԱԿ-ի N 107 կանոնակարգի:

5. MAZ 206946-ի առջևի կախոցը հանդիսանում է կախյալ, օդաճնշական, երկգլան, երկու երկայնական և երկու V-աձև տեղակայված ռեակտիվ քարշակներով, երկու տելեսկոպիկ ամորտիզատորներով, թափքի դիրքի մեկ կարգավորիչով: «MAЗ» ԲԲԸ-ի կողմից առաջարկվող ավտոբուսները համապատասխանում են անվտանգության, վերահսկելիության և կայունության բոլոր պահանջներին համաձայն՝ Մաքսային միության N 018 տեխնիկական կանոնակարգի պահանջների:

6. MAZ 206946 ավտոբուսները համալրված են օդաճնշական, ռադիալ, առանց կամերների անվադողերով, իսկ հետևի անիվները, երկթեք 245/70R19.5 անվադողի չափը համապատասխան է հատակի մակարդակի բարձրության պահանջներին: 255/70R22.5 չափս ունեցող անվադողերի տեղադրումը ցածրահատակ ավտոբուսներում հակասում է ՄԱԿ-ի կանոնակարգի N 107 առաջին աստիճանի 340 մմ առավելագույն բարձրության վերաբերյալ պահանջներին:

7. Առավելագույն քաշի սահմանափակումը 14000 կգ նպատակահարմար չէ: Վառելիքի ծախսի նվազեցման, ճանապարհի վրա փոքր ճնշման ապահովման, կոռոզիոն կայունության բարձրացման և այլ նպատակներով, «MAЗ» ԲԲԸ-ն լայնորեն կիրառում է կոմպոզիտային նյութեր՝ դասական պողպատե կոնստրուկցիաների փոխարեն, բացի այդ MAZ 206946 ավտոբուսն ապահովում է պահանջվող ուղևորատարողությունը 13450 կգ ընդհանուր զանգվածի պարագայում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերության ներկայացուցիչը խնդրել է, հաշվի առնելով այն փաստը, որ մրցույթի շրջանակներում Մինսկի ավտոմոբիլային գործարանն առաջարկել է պահանջվող ավտոտեխնիկային համարժեք ավտոտեխնիկա, «MAЗ» ԲԲԸ-ին չներառել այն մասնակիցների ցուցակում, ովքեր իրավունք չունեն մասնակցել գնումների գործընթացին:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.02.2021թ. թիվ 01/61-2218 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ է ներկայացրել ՕԱՕ «ՄԱՅ» ընկերությունը:

Վերը նշված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և Հրավերի ՄԱՍ 1-ի 8.10 կետով, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Տրամադրվում է Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/45 ընթացակարգի շրջանակներում 22.02.2021թ. ժամը 10:25-ին և 05.03.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/45 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/45 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար ավտոբուսների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱՅ» ՕԱՕ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2021թ. նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.02.2021թ. թիվ 26/26/1964-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 08.02.2021թ. թիվ 01/61-2218 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/45 ընթացակարգի շրջանակներում «ՄԱՅ» ՕԱՕ-ի հայտնած դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար ավտոբուսների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱՅ» ՕԱՕ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2021թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. ««ՄԱՅ» ՕԱՕ-ի հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝ ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.

*«**Թափքը՝** տրամադրված տեխնիկական բնութագրում բացակայում է պատվիրատուի կողմից սահմանված ներկման էլեկտրոֆորիսային ձևը:*

***Դիմապակի (հողմապակին) և պատուհաններ**՝ ներկայացված տեխնիական բնութագրում դիմապակին երեք կտորից բաղկացած չէ, ինչպես նաև բացակայում է եռևի ապակին՝ թրծված լինելու պատվիրատուի կողմից սահմանված պահանջը:*

***Ուղևորասրահը**՝ նշված տեխնիկական բնութագրում բացակայում է դեղատուփի և օդափոխվող լյուկի առկայությունը:*

***Կախոցի համակարգը՝** պատվիրատուի կողմից սահմանվել է՝ առջևի անկախ կախոցները, սակայն ներկայացված առաջարկում առջևի կախոցները ներկայացվել են որպես կախված:*

***Անվադողերը՝** ներկայացված տեխնիկական բնութագրում անիվների չափերը չեն համապատասխանում պատվիրատուի կողմից սահմանված չափերին:*

***Կառուցվածքային և տեխնիկական այլ չափորոշիչներ՝** ներկայացված տեխնիկական բնութագրում նշված ավտոբուսի չափերը և թույլատրելի առավելագույն զանգվածը չեն համապատասխանում պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին»»:*

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ կցելով 01.02.2021թ. նիստի թիվ 8 արձանագրությունը, և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 02.02.2021թ., շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2021թ. նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի՝ պայմանագրի նախագծին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկայի «Ավտոբուսի» ձեռքբերման համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

- ***Շարժակազմի չափորոշիչ*** *– ներմուծվող ավտոբուսները պետք է համապատասխանեն 2020 թվականի հունվարի 2-ից Հայաստանի Հանրապետությունում գործող Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ ընդունված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին՝ համաձայն որի հավելվածի սահմանված են այն տրանսպորտային միջոցները, որոնց վրա տարածվում են սահմանված պահանջները, նախատեսված են արտանետումներին վերաբերող դրույթները (մասնավորապես արգելանքը՝ ըստ տարեթվերի և էկոլոգիական դասերի): Ավտոբուսների հանձման պահին մատակարարը պետք է պատվիրատուին տրամադրի վեր նշված 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 877 որոշմամբ պահանջվող հավաստագրերը Մաքսային միության տարածք ներմուծման համար: Ավտոբուսները պետք է լինեն 2021 թվականից ոչ հին արտադրության, չշահագործված, վազքը ձեռքբերման պահին՝ ներգործարանային և փորձարկման համար թույլատրելի սահմաններում, ինքնատեղափոխման դեպքում՝ վազքը ոչ ավելի, քան արտադրող երկրից ներկրման օպտիմալ երթուղով հաշվարկված միջին հեռավորության կամ ներկայացված փաստաթղթերով հիմնավորված վազքին համապատասխան*

- ***դասը՝*** *միջին տեղափարողությամբ, եվրո 5 էկոլոգիական ստանդարտի չափանիշներով, 4x2 անվային բանաձևով, ետևի տանող կամրջակով, քաղաքային հարմարադասմամբ*
- ***տեղափարողությունը՝*** *նվազագույնը 22+1 նստատեղերի (այդ թվում՝ 1 վարորդի նստատեղը) առկայություն, առնվազն թվով 38 կանգնած ուղևորների տեղափոխման հնարավորություն*
- ***թափքը՝*** *կրող հատկանիշով՝ շրջանակային տիպի, վագոնային հարմարադասմամբ, ամբողջական մետաղյա՝ հակակոռոզիոն պաշտպանվածության հատկանիշով և էլեկտրոֆորեզային ներկման պատվածքով, պետք է լինի նստեցման ցածր տեղաբաշխմամբ մուտքով՝ առանց աստիճանային բարձրության, մուտքի բարձրությունը առավելագույնը պետք է լինի՝ 380մմ., գույնը նախապես համաձայնեցվի պատվիրատուի հետ՝ ըստ RAL կատալոգի:*
- ***ուղևորների նստացմեն դռներ՝*** *ուղևորների նստեցման համար նախատեսված՝ վարորդի կողմից էլեկտրահաղորդակի միջոցով հեռակառավարվող երկու ամբողջությամբ ապակեպատ պնևմատիկ դռների առկայությամբ, որոնցից մեկը՝ երկփեղկանի, դեպի ներս բացվածքով, հաշմանդամության սայլակի մուտքը ուղեսրահ բավարարող լայնությամբ,*
- ***առավելագույն արագությունը՝*** *80 կմ/ժ*
- ***դիմապակի (հողմապակին) և պատուհաններ՝*** *կողային (այդ թվում՝ վարորդի կողքի) ապակիների վրա շարժական բացովի փեղկերի, դիմակապին եռաշերտ,երեք կտորից բաղկացած, ետևի ապակին՝ թրծված*
- ***ետևի տեսադաշտի հայելիներ՝*** *հետին տեսանելիության էլեկտրական տաքացվող հայելիների առկայություն:*
- ***անվասայլակի թեքահարթակ՝*** *անվասայլակի տեղավորման համար պետք է նախատեսված լինի վարորդի միջամտությամբ կառավարվող, բացվող մեխանիկական մեկ թեքահարթակ, հաշվի առնելով գործող ստանդարտով սահմանված չափերը: Թեքահարթակը պետք է տեղադրվի ետևի դռան մուտքում և ունենա սահուն գործողության մեջ դրվելու և անվտանգ շահագործման երաշխիք, մինչև 300 կգ բեռնվածքով կրողունակություն:*
- ***ուղևորասրահը՝*** *նստարանները կայուն և կոշտ ամրացմամբ, շարժման սահմանափակ հնարավորություններ ունեցող ուղևորների համար նստատեղերի նախատեսմամբ և ցուցանակներով կահավորմամբ, հաշմանդամություն ունեցող անձանց*

նստատեղերի և հաշմանդամության սայլակի հարևանությամբ կանգառի ազդանշանման կոճակի, հարմարեցված բռնակների (նաև կանգնած ուղևորների համար), դեղատուփի և առնվազն երկու կրակմարիչների առկայություն՝ նվազագույն 4 կգ. տարողությամբ, առնվազն մեկ լյուկ՝ օդափոխությամբ, գազի արտահոսքի ազդարարման համակարգ, ուղևորասրահի (այդ թվում՝ նստարանների) պաստառապատումը՝ լվացվող նյութերից, վարորդի նստատեղը՝ կարգավորվող տեսակի, վարորդի և ուղևորասրահի միջև միջնապատի, վարորդի խցիկում՝ ուղևորասրահի դիտարկման հայելու, 12 վոլտ լարման երկու վարդակների առկայություն:

- ***ջեռուցում և հովացում՝*** *ուղևորասրահում ջեռուցման, հովացման, օդափոխման և օդորակման համակարգի առկայություն, նշված համակարգերը պետք է նախատեսված լինեն -40-+45 աստիճան ջերմաստիճանայանին պայմանների համար՝ նվազագույնը 23000Kcal/h: Վարորդի խցիկում պետք է լինի առանձին ջեռուցման համակարգ:*
- ***ուղեսրահի հատակը՝*** *պետք է պատրաստված լինի կվարցային ավազից, ամուր, ջրակայուն, դիմանա եղանակային բոլոր պայմաններին, լինի հեշտ մաքրվող*
- ***շարժիչը՝*** *սեղմված բնական գազով (մեթանով)աշխատող, առնվազն Եվրո 5 եկելոգիական նորմին համապատասխանող, հզորությունը ոչ պակաս՝ 200 ձ.ուժ (147 կՎտ)՝ ավտոբուսի ետնամասում տեղակայված, վառելիքի բաքերը նվազագույնտ CNG type 2, տանիքի վրա տեղաբաշխմամբ, տարողությունը՝ առնվազն 600 լիտր, հովացման համակարգը՝ հեղուկի միջոցով հովացմամբ, մեկ ամբողջական լիցքավորմամբ ավտոբուսը պետք է շահագործվի առնվազն 320կմ.*
- ***փոխանցման տուփը՝*** *ամբողջությամբ ավտոմատ, Allsion կամ ZF կամ համարժեք, ինտեգրված ռետարդեր*
- ***կախոցի համակարգը՝*** *առջևի և ետևի կամրջակների վրա՝ պնևմատիկ տեսակի 2/4, առջևի անկախ կախողներ և ցածր մուտք կամրջակ, երկկողմանի գործողությամբ 2/4 մեղմիչների առկայությամբ, Knorr համակարգի մեխանիկական վերելակային համակարգ կամ համարժեքը*
- ***արգելակային համակարգը՝*** *Երկողմանի պնեվմատիկ համակարգ WABCO կամ համարժեք, ABS, WABCO կամ համարժեք, ASR ձեռքի կանգնեցման արգելակ-զպնակայաին համակարգ էներգոմարտկոցով, կամ համարժեքը բոլոր անիվներում սկավառակային արգելակման համակարգ:*

- ***անվադողերը***՝ *օդաճնշումային, անխուց, ետևի անիվները՝ զույգ (երկշարք), չափերը՝ 255/70R22.5*
- ***ղեկային կառավարման համակարգը***՝ *ծախակողմյան տեղաբաշխմամբ ղեկով, հիդրավլիկական ուժեղարարով, կարգավորվող ղեկային սյունակով*
- ***կառուցվածքային և տեխնիկական այլ չափորոշիչներ***՝ *ցածր մուտքի հարմարադասում, եզրաչափային չափերը՝ երկարությունը 8500մմ±200մմ. , լայնությունը՝ հետին դիտարկման հայելիների բացվածքով՝ ոչ ավելի 2600 մմ-ից, ավտոբուսի բարձրությունը՝ առավելագույնը 3500, ուղևորասրահի բարձրությունը՝ ոչ պակաս 1950 մմ-ից, ավտոբուսի լցավորված և նախատեսված պարագաներով կահավորված զանգվածը ոչ ավելի 9200 կգ-ից, թույլատրելի առավելագույն զանգվածը (առավելագույն բեռնվածությունը)՝ 14000 կգ-ից,*
- ***Այլ***՝ *մատակարարաը պետք է ապահովի քարտային տոմսավորման (վալիդատորի, առնվազն 2) համար լարի և ուղեփակոցի, GPS սարքերի(առնվազն 1), բորտային սարքի (առնվազն 1) միացման հնարավորություն լարի և ուղևորահոսքի հաշվարքի սարքերի լարերի (յուրաքանչյուր դռան մուտքի վերևի հատվածում) համար նախատեսված մալուխների անցկացում (Պատվիրատուն կտրամադրի մալուխների և միացուցիչների անցկացման պահանջցող տեխնիկական նկարագրերըև գծագրերը), ուղեսրահում՝ 12 վ լարումով էլեկտրոնային համակարգ, ուղևորների տեղեկացման էլեկտրոնային ցուցատախտակի, երթուղու առնվազն թվով երեք ցուցանակների (այդ թվում՝ մեկը ուղեսրահի), ուղևորասրահի տեսահսկման 3, յուրաքանչյուր դռան տեսահսկման մեկական և ճանապարհի տեսահսկման տեսախցիկ, տեսախցիկների տեսանյութի պահպանման սարք՝ ներառված կոշտ սկավառակով և մատչելի ինտերֆեյսով հեռահար միացման համար, եղընթացքի դիտման տեսախցիկ, դրանց աշխատանքի հսկման համար վարորդի խցիկում մոնիտորի, կանգառների ավտոմատ հայտարարման սարքերի առկայություն, բարձրախոս, ավտոման հրդեհաշիջման համակարգ շարժիչի հատվածում, ավտոբուսի գործիքների արկղ: Ավտոբուսը պետք է ունենա մատչելի ինտերֆեյս ավտոբուսի CAN պորտին միանալու և ավտոբուսի վերաբերյալ տեղեկատվության ստանալու ահամար: Ուղևորների տեղեկացման համար տեղեկատվական ցուցատախտակները պետք է գրառվեն նաև հայերեն, ռուսերեն և անգլերեն բովանդակությամբ, որը պետք է ունենա մատչելի ինտերֆեյս հաղորդագրությունների փոփոխման համար:*

- ***USB լիցքավորման վարդակ***՝ *սրահում պետք է տեղադրված լինեն առնվազն 10 հատ USB հեռախոսի լիցքավորման վարդակներ*
- ***Լուսավորություն՝*** *լուսաազդանշանային սարքերը (այդ թվում՝ ուղեորասրահի լուսավորությունը)՝ լուսադիոդային տիպի լամպերով, վարորդի խցիկում, ավտոբուսի դիմացի մասում ինտեգրված լուսատուներ, դռների բանցման և փակման կոճակի լուսային ազդանշան, ետնամասի ինտեգրված լուսատուներ բարձր տեղակայման մակարդակով*
- ***Էլեկտրական համակարգ***՝ *մարտկոցը՝ 2 հատ, ընդհանուր՝ 24 վոլտ:*
- ***Դիմապակու խոզանակներ***՝ *պետք է կահավորված լինի դիմապակու էլեկտրական խոզանակներով՝ մի քանի կարգավորման ռեժիմներով և դիմապակու մաքրման հեղուկի բաքով:*
- ***Անցանելիություն՝*** *Ավտոբուսը պետք է ունենա 18% թեքության ճանապարհների անցանելիություն*
- ***Լուսածերպ***՝ *նվազագույնը 125 մմ.*
- ***Շահագործման պայմաններ***՝ *մատակարարվող ավտոբուսները շահագործվելու են -40-+45 աստիճան եղանակային պայմաններին, կայանումը իրականացվելու է բաց տարածքում, առանց ծածկի, շահագործումը իրականացվելու է միջին և վատ ճանապարհներով*
- ***Ուսուցում***՝ *Մատակարարը պետք է իրականացնի Պատվիրատուի աշխատակիցների կամ լիազոր ներկայացուցիչների ուսուցում ավտոբուսների շահագործման, սպասարկման, վերանորոգման հետ կապված հարցերում: Ուսուցումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության տարածում տեխնիկական անձնակազմի վարորդների համար*
- ***Մատակարարում՝*** *նշված քանակի ավտոբուսները պետք է մատակարարվեն պատվիրատուին 6 ամվա ընթացքում*
- ***Ավտոբուսի երաշխիքային սպասարկման ժամկետը***՝ *առնվազն 2 տարի կամ 150 000 կմ վազքի համար, որը պետք է իրականացվի ՀՀ Երևան քաղաքի վարչական տարածքում կամ նշված տարածքից առավելագույնը 1կմ. հեռավորության շրջանակում: Երաշխիքային սպասարկումը պետք է իրականացվի մատակարարի լիազոր ներկայացուցչի կամ դուստր ընկերության կողմից:*

Միաժամանակ արձանագրում եմ, որ «ՄԱՅ» ՕԱՕ-ի կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հետևյալ տեսքով.

Приложение № 1.1
к Приглашению на открытый конкурс

под кодом "EQ-BMAPDzB-21/6"

ПОЛНОЕ ОПИСАНИЕ
предлагаемого товара

ОАО МАЗ - управляющая компания холдинга БЕЛАВТОМАЗ в качестве участника в рамках открытого конкурса под кодом "EQ-BMAPDzB-21/6"* ниже по лотам представляет полное описание предлагаемого им товара.

Номерлота	Предлагаемый товар				
	фифирменное наименование	товарный знак	марка	наименованиепроизводителя	технические характеристики

	Автобус	МАЗ	**МАЗ206946**	ОАО «МАЗ»- управляющая компания холдинга «БЕЛАВТОМАЗ»	Ввозимые автобусы соответствуют установленным требованиям технического положения (ТС ТП 018/2011) Таможенного Союза - принятым на основании решения комиссии Таможенного Союза за N 877 от 9 декабря 2011 года «О безопасности колесных транспортных средств», действующий в Республике Армения с 2 января 2020 года. Согласно приложению указанного технического положения - установлены те транспортные средства, на которых распространяются установленные требования, предусмотрены положения касающиеся выбросам (в частности - по годам производства и экологическому классу). Автобусы 2021 года производства, неиспользованные, пробег в момент приобретения - в пределах допустимой нормы для внутризаводского и испытательного пробега. Класс - средней вместимости, в соответствии стандартам евро 5, с городской компоновкой, колесной формулой 4 х 2, с задним ведущим мостом. Пассажировместимость - предусмотрено 22+1 сидящих мест (в т.ч. место для водителя), возможности перевозки 38 стоящих пассажиров. Кузов - каркасного (несущего-рамного) типа, с вагонной компановкой, цельнометаллический. Предусмотрена антикоррозионная обработка кузова: сначала перед сваркой трубы стального каркаса проходят процесс травления и пассивирования в специальных растворах. Арки колес выполняются из нержавеющей стали, сваренный каркас покрывается антикоррозионной грунтовкой. После высыхания во все внутренние полости до уровня окон включительно под высоким давлением распыляется антикоррозионный состав Dinitrol 1000 (Швеция) или Mercasol 831 ML (Швеция) или Noxudol 750 (Швеция). Каркас облицовывается стальным оцинкованным листом. Имеются

					элементы из стеклопластика и алюминия. на кузов наносятся: шпатлевка, антикоррозионный грунт, грунт-наполнитель и акриловые и полиуретановые краски. Высота ступеньки над уровнем дороги, 340 (270 при книлинге)мм. Автобус с двумя полностью застекленными пневматическими дверями, дистанционно управляемыми водителем с помощью линии электропередачи, одна из которых двухстворчатая, с открыванием внутрь и шириной (1100 мм, измеренная на уровне поручней), позволяющей инвалидному креслу добраться до прохода. Максимальная скорость - 80км/ч. Боковые окна (включая водительскую) с подвижными открывающимися створками. Лобовое стекло панорамное, многослойное (3-хслойное),безбликовое, односекционное(панорамное). Зеркала заднего вида с электроподогревом. Размещение инвалидных колясок обеспечено одним управляемым водителем, механически открываемым пандусом (конструкция и монтаж соответствуют Правилам ECE R107). Пандус установлен у входа в заднюю дверь, гарантирует безопасную эксплуатацию и грузоподъемность до 300 кг. Автобус имеет городские, мягкие сиденья с жесткой опорой, сиденья для пассажиров с ограниченной подвижностью, указатели, сиденья для инвалидов, кнопку остановки, регулируемые ручки (для стоящих пассажиров), два огнетушителя - 4 кг., сигнализация утечки газа, обивка моющимися материалами, сиденье водителя регулируемого типа, перегородка кабины водителя, зерколо заднего вида и два разема 12В в кабине водителя. В салоне автобуса имеются системы отопления, охлаждения, вентиляции, кондиционирования воздуха, указанные системы рассчитаны на температурный режим - 40- + 45 градусов, мощность кондиционера 23000kcal/h. В кабине водителя отдельная система отопления. Пол в салоне высокопрочный (из кварцевого песка), водонепроницаемый, выдерживает любые погодные условия, легко чистится. Двигательрасположен в задней части автобуса. WeichaiWP5NG200E51 147кВт (200л.с.) CNG (сжатый природный газ). Количество баллонов 4 х171л (всего 684 литров) тип 3 (на крыше). Запас хода не менее 350 км.

					Коробка передач автоматическая AllisonT270w/Ret.C6 передними передаточными числами с дифференциальным преобразователем, со встроенным замедлителем и оснащенным диагностическим разъемом. Передняя подвеска зависимая, пневматическая, двухбаллонная, сдвумя продольными и двумя V-образно расположенными реактивными тягами, с двумя телескопическими амортизаторами, с одним регулятором положения кузова. Задняя подвеска зависимая, пневматическая, четырехбаллонная с двумя продольными и двумя V-образно расположенными реактивными тягами, с четырьмя телескопическими амортизаторами, с двумя регуляторами положения кузова. Система принудительного подъема с книлингом. Двусторонняя пневматическая система WABCO, ABS, WABCO, ручная тормозная система ASR с электропитанием, полностю дисковая тормозная система. Шины - пневматические, радиальные, бескамерные, задние колеса 2-хскатные Размерность 245/70 R19,5. Рулевое управление - с левосторенним расположением руля, с гидроусилителем, с регулируемой рулевой колонкой. Низкий вход удверей (2046 мм), Размеры 8800x2550x3400. Снаряженная масса автобуса 8850 кг. Максимально допустимая полная масса автобуса 13450 кг. ОАО «МАЗ» предоставляет возможность подключения для устойств (монтаж кабелей) валидации карты (валидатор, не менее 2), устройств GPS (не менее 1), бортового устройства (не менее 1), прокладки кабелей для проводов (подсчет пассажиров) (в верхней части каждой двери входа) (Заказчик предоставит чертежи кабелей (технические условия, требующие подключения разъемов), 12в электронная система, электронная табло для информации пассажиров, с не менее трех указателями маршрута (в том числе один в салоне), 3 видеокамеры- видеонаблюдение дверей и видеонаблюдения дороги, устройство для хранения видеоматериала с удаленным подключением. Видеокамера заднего вида, монитор в кабине водителя, устройства автоматической остановки, громкоговоритель, автоматическая система пожаротушения в моторном отсеке, ящик для инструментов автобуса. доступный интерфейс для подключения к шине CAN и получения информации. Для информирования пассажиров информационные табло содержат армянский, русский и английские языки и имеют доступный интерфейс для

					изменения сообщений. В салоне автобуса 10 USB-разъемов для зарядки. Светодиодные сигнальные устройства (включая освещение салона) со светодиодными лампами, встроенные светильники в кабине водителя, передные цветовые лампы автобуса, световой сигнал кнопки открытия и закрытия дверей, встроенные задние светильники. Электрическая система - Батарея: 2 шт. 6СТ-140 А. Напряжение 24В Автобус оборудован электрическими щетками лобового стекла с несколькими режимами регулировки, бачком с жидкостью стеклоочистителя. Проходимость - уклон 18%. Дорожный просвет -125 мм. Поставляемые автобусы могут эксплуатироваться в погодных условиях -40- + 45 градусов, стоянка может производиться на открытой местности, без крыши, эксплаутация на дорогахсредней и плохой котегории. 161 ед. автобуса МАЗ 206946 будет доставлена заказчику в течение 6 месяцев. Проведение обучения персонала Заказчика или уполномоченных представителей по эксплуатации, техническому обслуживанию и ремонту автобусов. Обучение водителей технического персонала на теритоии Республики Армения. Гарантийный срок обслуживания 2 года или 150000 км пробега. В гарантийный период эксплуатации Покупатель обязан проводить техническое обслуживание и ремонт Автотехники за свой счет в объеме и в сроки, оговоренные в «Руководстве по эксплуатации» и сервисной книжке, прикладываемых Продавцом к Автотехнике, на станциях технического обслуживания (СТО).

Եվ այսպես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, որն էլ իր հերթին հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ինչ վերաբերվում է Ընկերության՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում Երևանի քաղաքապետին ուղղված 02.02.2021 թիվ 142-9/513 գրությանը, ինչպես նաև ՍՑ-ՆԳ-2021/45 ծածկագրով ընթացակարգի քննության ընթացքում 05.03.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնած դիրքորոշմանը, որոնցով բարձրացվել են միևնույն խնդիրները, արձանագրում եմ հետևյալը.

Ընկերությունը մասնավորապես հայտնել է հետևյալը. «*Ընթացակարգի հրավերի՝ պայմանագրի նախագծին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված 255/70R22.5 չափս ունեցող անվադողերի տեղադրումը ցածրահատակ ավտոբուսներում հակասում է ՄԱԿ-ի կանոնակարգի N 107 առաջին աստիճանի 340 մմ առավելագույն բարձրության վերաբերյալ պահանջներին, ինչպես նաև առավելագույն քաշի սահմանափակումը 14000 կգ նպատակահարմար չէ. գնման առարկայի համար ներկայացված վերոնշված պահանջները խտրական են, սահմանափակում են մրցակցությունը և հակասում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին»,* սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության կողմից փաստացի վիճարկվում է հրավերով սահմանված գնման առարկայի բնութագիրը, մինչդեռ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, սակայն արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետն Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, ուստի «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվելուց հետո Ընկերության կողմից դիրքորոշմամբ բարձրացված խնդիրները, որոնցով ըստ էության վիճարկվում է գնման առարկայի բնութագիրը, չի կարող քննության առարկա հանդիսանալ սույն գործի շրջանակներում:

Միաժամանակ, անդրադառնալով Ընկերության կողմից հայտնած այն պնդմանը, որ Ընթացակարգի շրջանակներում Մինսկի ավտոմոբիլային գործարանն առաջարկել է պահանջվող ավտոտեխնիկային համարժեք ավտոտեխնիկա, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող և Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի համարժեքության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն կամ որևէ վերաբերելի ապացույց: Ընդ որում՝ այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է ՍՑ-ՆԳ-2021/45 ընթացակարգի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում կայացնելը:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «ՄԱՅ» ՕԱՕ-ն «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.02.2021թ. թիվ 26/26/1964-2021 գրությամբ «ՄԱՅ» ՕԱՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄԱՅ» ՕԱՕ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**